ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի ապրիլի 8-ից 12-ը Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ

Վահրամ Դումանյան,
Կարեն Գիլոյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար,
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա), 2021 թվականի ապրիլի 8-ից 12-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

ՌԴ Ծանրամարտի ֆեդերացիա

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ներկա գտնվելը Ծանրամարտի Եվրոպայի առաջնությանը,
Մասնակցել մեդալակիրների պարգևատրման հանդիսավոր արարողությանը,
Հանդիպել ՌԴ գիտության և բարձրագույն կրթության նախարարի և
ՌԴ սպորտի նախարարի տեղակալի հետ:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանի և ՌԴ գիտության և բարձրագույն կրթության նախարար Վալերի Ֆալկովի հետ հանդիպման

ընթացքում նախարարները կարևորել են բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում առկա հայ-ռուսական համագործակցությունը և ընդգծել երկկողմ հարաբերությունների՝ ավանդական բարեկամական կապերի ամրապնդման և հետագա զարգացման անհրաժեշտությունը, քննարկել են համագործակցության մի շարք հարցեր՝ ուղղված գիտության և բարձրագույն կրթության ոլորտում համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորություններին:

Վահրամ Դումանյանն ու Վալերի Ֆալկովն անդրադարձել են նաև Միջպետական ծրագրի շրջանակում իրականացվող կրթաթոշակային ծրագրին, որը երկկողմ համագործակցության ձևաչափով երիտասարդներին ՀՀ և ՌԴ առաջատար բուհերում բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն է տալիս:

Նախարարները քննարկել են նաև գիտության ոլորտում համագործակցության հնարավորություններն ու խնդիրները: Նշվել է, որ համատեղ ծրագրերի իրականացումը կնպաստի նաև գիտական նոր զարգացումների ապահովմանը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը Մոսկվայում հանդիպել է նաև Ռուսաստանի Դաշնության սպորտի նախարարի տեղակալ Քսենիա Մաշկովայի հետ: Կողմերը քննարկել են սպորտի ոլորտում հայ-ռուսական համագործակցության ընդլայնմանն առնչվող հարցեր, երկուստեք կարևորվել է համատեղ մարզական միջոցառումների անցկացումը:
Անդրադարձ է եղել մասնավորապես հակադոպինգային ոլորտում համագործակցությանը, քննարկվել են Հայաստանի և Ռուսաստանի տարբեր մարզաձևերի հավաքականների համատեղ ուսումնամարզական հավաքների, ինչպես նաև մարզիչների համար սեմինարներ և փոխանակման ծրագրեր իրականացնելու հնարավորությունները:
Կողմերը կարևորել են նաև փոխգործակցությունն ու փորձի փոխանակումն ադապտիվ և մասսայական սպորտի զարգացման գործում:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանը և նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանն մրցավայրից հետևել են հայ ծանրորդների ելույթներին:

Հայաստանն առաջնությունում ներկայացրել է 14 մարզիկ-մարզուհի, որոնք նվաճել են երկամարտի 2 ոսկե, 2 արծաթե և 4 բրոնզե մեդալ:

Աշխարհամասի չեմպիոնի կոչումը նվաճել են Կարեն Ավագյանը և Սամվել Գասպարյանը:

Եվրոպայի առաջնության արծաթե մեդալակիր են դարձել Արսեն Մարտիրոսյանը և Գոռ Մինասյանը: Պատվո հարթակի 3-րդ աստիճանին կանգնել են Լիանա Գյուրջյանը, Անդրանիկ Կարապետյանը, Հակոբ Մկրտչյանը և Վարազդատ Լալայանը:

Հայաստանի մյուս ներկայացուցիչները գրանցել են հետևյալ արդյունքները.

Իզաբելա Յայլյանը պոկում վարժությունում գրանցել է 90 կգ արդյունք՝ նվաճելով փոքր արծաթե մեդալ, իսկ հրում վարժությունն ավարտել է 105 կգ ցուցանիշով. երկամարտի 195 կգ արդյունքով Յայլյանը զբաղեցրել է չորրորդ հորիզոնականը:

Ռաֆիկ Հարությունյանը հանդես է եկել B խմբում և երկամարտի 346 կգ արդյունքով (150 կգ + 196 կգ) զբաղեցրել խմբում առաջին հորիզոնականը: Բացի դրանից՝ հրում վարժությունում գրանցած արդյունքով հայ ծանրորդը երիտասարդների ռեկորդ է սահմանել և փոքր բրոնզե մեդալ նվաճել:

Դավիթ Հովհաննիսյանը պոկում վարժությունում 165 կգ արդյունքով զբաղեցրել է 5-րդ հորիզոնականը, իսկ հրումում 0 է ստացել՝ 3 անգամ չկարողանալով հրել 195 կգ ծանրաձողը:

Աշխարհի, Եվրոպայի չեմպիոն, Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր Սիմոն Մարտիրոսյանը պոկում վարժությունում փոքր ոսկե մեդալ է նվաճել 190 կգ արդյունքով, իսկ հրում վարժությունում 0 է ստացել: Տաթև Հակոբյանը զբաղեցրել է 9-րդ տեղը՝ երկամարտում գրանցելով 221 կգ արդյունք, իսկ Արփինե Դալալյանը երկամարտի 221 կգ ցուցանիշով չորրորդն է եղել +87 կգ քաշային կարգում:

ՀՀ և ՌԴ նախարարներն անդրադարձել են նաև Հայաստանում ռուսական կողմի մասնակցությամբ հիմնադրված բուհերի և բուհերի մասնաճյուղերի գործունեության և զարգացման հեռանկարներին:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ՀԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանի և ՌԴ գիտության և բարձրագույն կրթության նախարար Վալերի Ֆալկովի հետ հանդիպման ավարտին պայմանավորվածություն է ձեռք բերվել բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում ընդլայնել համագործակցությունը նոր ծրագրերի իրականացմամբ, փորձի և տեղեկության փոխանակմամբ: Վ.Դումանյանի և Ֆալկովի միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն ստեղծելու միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ կրթության և գիտության ոլորտում համագործակցության խթանման նպատակով:

Կարեն Գիլոյանը և Քսենիա Մաշկովան հայ-ռուսական սպորտային հարաբերությունների զարգացմանն ուղղված գործնական քայլեր ձեռնարկելու, ինչպես նաև սպորտի բնագավառում հուշագրի ստորագրման պայմանավորվածություն են ձեռք բերել:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանը այցելել է նաև Մոսկվայի մարզի Լյուբերցի քաղաքի հայկական համայնքի մեկօրյա դպրոց (տնօրեն Դավիթ Կուլիջանյան) և հանդիպել հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում Կուլիջանյանին հանձնվել է ՀՀ ԿԳՄՄՆ պատվոգիր՝ հայապահպանության ոլորտում ներդրում ունենալու համար, ինչպես նաև համայնքի ներկայացուցիչներին ներկայացվել են ոլորտների բարեփոխումներն ու քննարկվել համագործակցության համատեղ ծրագրերը:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

ՌԴ գիտության և բարձրագույն կրթության նախարար Վ. Ֆալկովը հայտնել է, որ 2021 թվականին Սոչիի «Սիրիուս» կրթական կենտրոնում կազմակերպվելու է «Մաթեմատիկա» կրթական ծրագրի միջոցառումը, իսկ 2022 թվականի հուլիսի 6-14-ը Սանկտ Պետերբուրգում տեղի է ունենալու Մաթեմատիկայի միջազգային կոնգրեսը: Նա Վ. Դումանյանին սիրով հրավիրել է մասնակցելու այդ երկու կարևոր միջոցառումներին:

ՌԴ գիտության և բարձրագույն կրթության նախարար Վ. Ֆալկովը հայտնել է, որ Ռուսաստանի գիտության հիմնադրամն իրականացնում է դրամաշնորհային ծրագրեր, և ուրախ կլինի, որ Հայաստանի կրթագիտական կառույցները նույնպես մասնակցեն այդ նախագծերի մրցույթներին:

Կարեն Գիլոյանը ռուս գործընկերոջը հրավիրել է Հայաստան, իսկ Քսենիա Մաշկովան ԿԳՄՄ նախարարի տեղակալին՝ ներկա գտնվելու աշնանը Կազանում կայանալիք ԱՊՀ երկրների առաջին մարզական խաղերին:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

15.04.2021

X 

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

15.04.2021թ.